ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# ԶԵԿՈՒՅՑ

## Հայաստանի Հանրապետության 2017 թ. խոշորացվող համայնքների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների

# ՄԱՐՄԱՇԵՆ

## համայնք

(Մայիսյան, Լեռնուտ, Կապս, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Հովունի, Մարմաշեն, Մեծ Սարիար, Շիրակ, Ջաջուռ, Ջաջուռավան, Վահրամաբերդ, Փոքրաշեն, Քեթի բնակավայրեր)

Հեղինակ՝ Միհր Հակոբյան

Երևան – 2017




# ՄԱՐՄԱՇԵՆ
## համայնքը՝ հպանցիկ

**Վարչական տարածքը՝** 18 780 հա

**Բնակչությունը՝** 11 410 մարդ

**Մարզը՝** Շիրակ

**Համայնքի կենտրոնը՝** Մայիսյան

**Բնակավայրերը՝** Մայիսյան, Լեռնուտ, Կապս, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Հովունի, Մարմաշեն, Մեծ Սարիար, Շիրակ, Ջաջուռ, Ջաջուռավան, Վահրամաբերդ, Փոքրաշեն, Քեթի

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. հունիսի 9-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն՝ Շիրակի մարզի Մարմաշեն խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 15 գյուղական բնակավայր՝ Մայիսյան (համայնքի կենտրոն), Լեռնուտ, Կապս, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Հովունի, Մարմաշեն, Մեծ Սարիար, Շիրակ, Ջաջուռ, Ջաջուռավան, Վահրամաբերդ, Փոքրաշեն, Քեթի:

### Համայնքի ընդհանուր նկարագիրը

Համայնքի բնակավայրերը տեղակայված են ՀՀ Շիրակի մարզի կենտրոնական հատվածում և մոտ են գտնվում մարզկենտրոն Գյումրուն: Բնակավայրերի գոտիականությունը լեռնային է. ծովի մակերևույթից բարձրությունն ըստ բնակավայրերի տատանվում է 1600-1900 մետրի սահմաններում: Համայնքի կենտրոն Մայիսյանը գտնվում է 1660 մետր բարձրության վրա: Համայնքի ընդհանուր վարչական տարածքը խոշորացումից հետո կազմում է **18 780** հա: Տարածքով ամենամեծ բնակավայրը Ջաջուռն է (2416 հա), ամենափոքրը՝ Ջաջուռավանը (260 հա): Համայնքի կենտրոն Մայիսյանն այս չափանիշով 4-րդն է (1676 հա):

**Բնակչությունը**

Համայնքի ընդհանուր բնակչությունը 2017 թ. դրությամբ կազմում է **11 410** մարդ: Բնակչությամբ ամենամեծ բնակավայրը Մարմաշենն է (1886 մարդ), իսկ ամենափոքրը՝ Կարմրաքարը (43 մարդ): Մայիսյանը բնակչության թվով 2-րդն է (1625 մարդ): Համայնքում բնակչության խտությունը կազմում է 64.95 մարդ/կմ$^2$: Ամենախիտ բնակեցված բնակավայրը Վահրամաբերդն է (174.88 մարդ/կմ$^2$), ամենանոսրը՝ Կարմրաքարը (4.57 մարդ/կմ$^2$): Մայիսյանում բնակչության խտությունը կազմում է 96.96 մարդ/կմ$^2$: Բնակավայրերի վարչական տարածքների ու բնակչության թվի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.** Մարմաշեն խոշորացվող համայնքում ներառված բնակավայրերի վարչական տարածքն ու բնակչությունը

| № | Բնակավայրի անվանումը | Վարչական տարածքը (հա) | Հաշվառված բնակչությունը (2017 թ. դրությամբ) | Բնակչության խտություն (մարդ/կմ$^2$) |
|---|---|---|---|---|
| 1 | **Մայիսյան** | 16.76 | 1625 | 96.96 |
| 2 | Լեռնուտ | 8.80 | 155 | 17.61 |
| 3 | Կապս | 8.12 | 684 | 84.24 |
| 4 | Կարմրաքար | 9.41 | 43 | 4.57 |
| 5 | Կրաշեն | 13.40 | 244 | 18.21 |
| 6 | Հացիկ | 12.13 | 1045 | 86.15 |
| 7 | Հովունի | 11.36 | 643 | 56.60 |
| 8 | Մարմաշեն | 12.20 | 1886 | 154.59 |
| 9 | Մեծ Սարիար | 18.93 | 377 | 19.92 |
| 10 | Շիրակ | 16.74 | 1130 | 67.50 |
| 11 | Ջաջուռ | 24.16 | 771 | 31.91 |
| 12 | Ջաջուռավան | 2.60 | 202 | 77.69 |
| 13 | Վահրամաբերդ | 8.20 | 1434 | 174.88 |
| 14 | Փոքրաշեն | 7.46 | 215 | 28.82 |
| 15 | Քեթի | 17.53 | 956 | 54.54 |
| | **Ընդամենը /միջինը/** | **18 780** | **11 410** | **64.95** |

**Քարտեզ 1.** Մարմաշեն համայնքի բնակչության տեղաբաշխումն (մարդ)՝ ըստ բնակավայրերի




**Բնակավայրերի տեղաբաշխումն ու տրանսպորտային կապերը**

Մայիսյանը մյուս բնակավայրերի համեմատ գտնվում է կենտրոնական դիրքում: Համայնքի կենտրոնին ամենամոտ տեղակայված բնակավայրը Քեթին է (3.2 կմ), ամենահեռուն՝ Կրաշենը (19.6 կմ): Ալագյազից բոլոր բնակավայրերի միջին հեռավորությունը 11.8 կմ է, հասնելու համար պահանջվող միջին ժամանակը՝ 23 րոպե: Բացի Լեռնուտ, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Հովունի, Մեծ Սարիար, Ջաջուռ և Ջաջուռավան բնակավայրերից՝ մնացածը տեղակայված են հանրապետական կամ միջպետական նշանակության ճանապարհների վրա:

Ներհամայնքային տրանսպորտ չկա ոչ մի բնակավայրում, իսկ Կարմրաքարում չի գործում նաև միջհամայնքային տրանսպորտ: Գյումրիից դեպի Մարմաշեն-Վահրամաբերդ-Կապս երթուղին գործում է յուրաքանչյուր ժամ, դեպի Մայիսյան-Քեթի-Փոքրաշեն, Շիրակ-Ջաջուռ-Ջաջուռավան-Կրաշեն-Մեծ Սարիար, Հացիկ, Հովունի երթուղիները՝ երկու ժամը մեկ անգամ, իսկ Գյումրի-Լեռնուտ երթուղին՝ շաբաթը երկու անգամ:

Համայնքի տրանսպորտային կապերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2.** Մարմաշեն համայնքի տրանսպորտային կապերը

| Բնակավայր | Ներքին ճանապարհների երկարությունը (կմ) | Հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ) | Հասնելու համար պահանջվող ժամանակ (րոպե) | Հեռավորությունը մոտակա մայրուղուց |
|---|---|---|---|---|
| **Մայիսյան** | 8 | - | - | 0 |
| Լեռնուտ | 1 | 9.5 | 35 | 4.1 |
| Կապս | 0.6 | 13.3 | 17 | 0 |
| Կարմրաքար | 0.5 | 6.5 | 26 | 6.2 |
| Կրաշեն | 2.5 | 19.6 | 39 | 1.9 |
| Հացիկ | 14 | 3.9 | 16 | 4.7 |
| Հովունի | 6 | 8.2 | 25 | 4.2 |
| Մարմաշեն | 8 | 9.3 | 14 | 0 |
| Մեծ Սարիար | 5 | 14.9 | 40 | 2.7 |
| Շիրակ | 1.2 | 7.5 | 27 | 0 |
| Ջաջուռ | 7 | 18.1 | 26 | 1.5 |
| Ջաջուռավան | 0.8 | 18.5 | 27 | 1.5 |
| Վահրամաբերդ | 8 | 11.9 | 16 | 0 |
| Փոքրաշեն | 1 | 7.2 | 9 | 0 |
| Քեթի | 9 | 3.2 | 5 | 0 |
| **Միջինը** | **4.84** | **11.8** | **23** | **1.79** |

Մեծ Սարիարում և Կրաշենում ավտոճանապարհները մասամբ ասֆալտապատ են, մինչդեռ մնացած բնակավայրերում դրանք ամբողջովին հողային են և հիմնանորոգման կարիք ունեն:

Մայիսյանի հեռավորությունը մարզկենտրոն Գյումրուց 6.7 կմ է:

### Խմելու ու ոռոգման ջրամատակարարումը և աղբահանությունը[1]

Համայնքի 15 բնակավայրերից յոթում ջրամատակարարումը կառավարվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի, հինգում՝ ՏԻՄ-ի կողմից, մեկում՝ Շիրակում՝ համատեղորեն, իսկ Կարմրաքարում խողովակաշար անցկացված չէ. բնակիչները ջուրը բերում են մոտակա միակ աղբյուրից: Լեռնուտում և Մեծ Սարիարում խմելու ջրի խողովակաշարերը գտնվում են բավարար վիճակում: Մայիսյան, Կապս, Կրաշեն, Ջաջուռ և Վահրամաբերդ բնակավայրերում դրանք մասամբ փոխված են, իսկ մյուսներում հիմնանորոգման կարիք ունեն: Բոլոր բնակավայրերում ջրամատակարարումը շուրջօրյա է, սակայն ամռան ամիսներին տապի պատճառով հաճախ ջուրը ցամաքում է, և ջրամատակարարումն իրականացվում է ժամակարգով: Այն համայնքներում, որտեղ ջրամատակարարումը կառավարվում է օպերատորի կողմից, սակագինը տատանվում է 146-180 դրամի սահմաններում:

Բնակավայրերում ջրամատակարարման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 3-ում:

[1] Փոքրաշեն բնակավայրում խմելու ու ոռոգման ջրամատակարարման և աղբահանության վերաբերյալ տվյալները բացակայում են:

**Աղյուսակ 3**. Մարմաշեն համայնքում խմելու ջրի մատակարարումը

| Բնակավայր | Ջրամատա-կարարման կառավարողը | Ջրամատա-կարարման ժամակարգը | Սակագինը (1 մ$^3$) | Խողովակաշարի տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|
| **Մայիսյան** | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 180 դր. | մասնակի նորոգման կարիք |
| Լեռնուտ | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | բավարար |
| Կապս | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 180 դր. | մասնակի նորոգման կարիք |
| Կարմրաքար | - | - | - | - |
| Կրաշեն | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | մասնակի նորոգման կարիք |
| Հացիկ | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 180 դր. | հիմնանորոգման կարիք |
| Հովունի | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 180 դր. | հիմնանորոգման կարիք |
| Մարմաշեն | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 146 դր. | հիմնանորոգման կարիք |
| Մեծ Սարիար | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | բավարար |
| Շիրակ | ՏԻՄ / «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 180 դր. | հիմնանորոգման կարիք |
| Ջաջուռ | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | մասնակի նորոգման կարիք |
| Ջաջուռավան | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | հիմնանորոգման կարիք |
| Վահրամաբերդ | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 147 դր. | մասնակի նորոգման կարիք |
| Փոքրաշեն | - | - | - | - |
| Քեթի | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 157 դր. | հիմնանորոգման կարիք |

Լեռնուտում, Կարմրաքարում և Ջաջուռավանում ոռոգման համակարգեր չկան: Քեթի, Կապսի, Կրաշենի, Շիրակի, Ջաջուռի և Վահրամաբերդի ոռոգման համակարգերը վերանորոգված չեն, և ներքին ցանցում ջրի կորուստները գերազանցում են 50%-ը: Քեթիում համակարգը բավարարում է միայն հողերի 10%-ի ոռոգման համար: Մեծ Սարիարում առկա համակարգը գործում է քիչ կորուստներով, սակայն ցանցը խիստ սահմանափակ է և բավարարում է միայն տնամերձ հողատարածքների ոռոգմանը: Մայիսյանում և Հացիկում ջրի կորուստներն ավելի քիչ են, իսկ համակարգը մասնակի նորոգման կարիք ունի: Մարմաշենում և Հովունիում ոռոգման համակարգերը գտնվում են բավարար վիճակում:

Համայնքի 15 բնակավայրերից յոթում աղբահանությունն իրականացվում է կենտրոնացված եղանակով, ևս յոթում՝ անհատական: Կրաշենի պարագայում համայնքապետարանը տարին 3-4 անգամ կազմակերպում է կենտրոնացված աղբահանություն, սակայն ամենօրյա աղբահանությունը կատարվում է բնակիչների կողմից: Իրականացման հաճախականությունը տատանվում է շաբաթը մեկ-երկու անգամից մինչև ամիսը մեկ-երկու անգամ: Վահրամաբերդում աղբահանության համար սահմանված է 10 դրամ սակագին, իսկ մյուս բնակավայրերում այն անվճար է: Աղբամաններ տեղադրված են հինգ բնակավայրերում: Մարմաշենից ու Քեթիից աղբը տեղափոխվում է Գյումրու աղբավայր, իսկ մյուս բնակավայրերից՝ մոտակա չօգտագործվող տարածքներ:

Համայնքում աղբահանության վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4**. Մարմաշեն համայնքի աղբահանությունը

| Բնակավայր | Իրականացման եղանակը | Հաճախականությունը | Սակագինը (1 անձը) | Աղբամանների առկայությունը |
|---|---|---|---|---|
| **Մայիսյան**[2] | անհատական | - | - | - |
| Լեռնուտ | կենտրոնացված | ամիսը մեկ անգամ | անվճար | 4 |
| Կապս | կենտրոնացված | ամիսը 3 անգամ | անվճար | 25 |
| Կարմրաքար | անհատական | - | - | - |
| Կրաշեն | անհատական | - | - | - |
| Հացիկ | անհատական | - | - | - |
| Հովունի | անհատական | - | - | - |
| Մարմաշեն | կենտրոնացված | շաբաթը մեկ-երկու անգամ | անվճար | 24 |
| Մեծ Սարիար | անհատական | - | - | - |
| Շիրակ | կենտրոնացված | ամիսը մեկ-երկու անգամ | անվճար | 35 |
| Ջաջուռ | կենտրոնացված | ամիսը երկու-երեք անգամ | անվճար | - |
| Ջաջուռավան | անհատական | - | - | - |
| Վահրամաբերդ | կենտրոնացված | շաբաթը մեկ անգամ | 10 դր. | - |
| Փոքրաշեն | - | - | - | - |
| Քեթի | կենտրոնացված | շաբաթը մեկ անգամ | անվճար | 25 |

**Կրթական հաստատությունները**

Համայնքում գործում է 16 կրթական հաստատություն, որոնցից մեկը մանկապարտեզ է, մեկը՝ տարրական, մեկը՝ հիմնական, 12-ը՝ միջնակարգ, ևս մեկը՝ գեղարվեստի դպրոցներ են (աղյուսակ 5):

**Աղյուսակ 5**. Մարմաշեն համայնքում առկա կրթական հաստատությունները

| Բնակավայր | Մանկապարտեզ (հաճախողների քանակ) | Տարրական դպրոց (հաճախողների քանակ) | Հիմնական դպրոց (հաճախողների քանակ) | Միջնակարգ դպրոց (հաճախողների քանակ) | Գեղարվեստի դպրոց (հաճախողների քանակ) |
|---|---|---|---|---|---|
| **Մայիսյան** | 1 (25) | - | - | 1 (133) | - |
| Լեռնուտ | - | - | - | 1 (6) | - |
| Կապս | - | - | - | 1 (86) | - |
| Կարմրաքար | - | - | - | - | - |
| Կրաշեն | - | - | 1 (7) | - | - |
| Հացիկ | - | - | - | 1 (88) | - |
| Հովունի | - | - | - | 1 (50) | - |
| Մարմաշեն | - | - | - | 1 (230) | 1 (68) |
| Մեծ Սարիար | - | - | - | 1 (52) | - |
| Շիրակ | - | - | - | 1 (120) | - |
| Ջաջուռ | - | - | - | 1 (85) | - |
| Ջաջուռավան | - | 1 (6) | - | - | - |
| Վահրամաբերդ | - | - | - | 1 (147) | - |
| Փոքրաշեն | - | - | - | 1 (27) | - |
| Քեթի | - | - | - | 1 (78) | - |
| **Ընդամենը** | **1** | **1** | **1** | **12** | **1** |

[2] Մայիսյանում շուտով տեղադրվելու է 25 հատ աղբաման, իսկ աղբահանությունն իրականացվելու է համայնքապետարանի կողմից:

Համայնքի միակ մանկապարտեզը գործում է Մայիսյանում և գտնվում է բավարար վիճակում: Կապսում, Կրաշենում և Քեթիում նախկինում գործել են մանկապարտեզներ, սակայն անբավարար ֆիզիկական վիճակի պատճառով այժմ օգտագործման պիտանի չեն: Ջաջուռավանի տարրական դպրոցը, Կրաշենի հիմնական դպրոցը, ինչպես նաև Լեռնուտի, Կապսի, Հացիկի, Հովունու, Մեծ Սարիարի և Ջաջուռի միջնակարդ դպրոցները հիմնանորոգման, իսկ Մայիսյանի, Մարմաշենի, Շիրակի, Վահրամաբերդի ու Քեթիի միջնակարգ դպրոցներն ընթացիկ նորոգման կարիք ունեն: Փոքրաշենի միջնակարգ դպրոցը գտնվում է բավարար վիճակում: Կարմրաքարում կրթական հաստատություններ չեն գործում: Աշակերտների թվով ամենամեծը Մարմաշենի միջնակարգ դպրոցն է (230 աշակերտ), ամենափոքրը՝ Ջաջուռավանի տարրական դպրոցը (6 աշակերտ):

**Առողջապահական հաստատությունները**

Համայնքում գործում է 10 բուժկետ և 3 բուժամբուլատորիա: Քեթիի բուժկետ, ինչպես նաև Մայիսյանի ու Մարմաշենի բուժամբուլատորիաները գտնվում են բավարար վիճակում: Լեռնուտի, Կրաշենի, Մեծ Սարիարի, Շիրակի, Ջաջուռավանի ու Վահրամաբերդի բուժկետերն ունեն հիմնանորոգման, իսկ Կապսի, Հացիկի ու Հովունու բուժկետերը և Ջաջուռի բուժամբուլատորիան՝ ընթացիկ նորոգման կարիք:

Կարմրաքարում ու Փոքրաշենում բժշկական հաստատություններ չեն գործում:

**Մշակութային հաստատությունները**

Համայնքում գործում է չորս մշակույթի տուն, որոնց դահլիճները նախատեսված են 250-300 հանդիսականի համար: Մայիսյանի ու Վահրամաբերդի մշակույթի տները գտնվում են բավարար վիճակում: Կապսի մշակույթի տունն ունի ընթացիկ նորոգման, իսկ Հովունունը՝ հիմնանորոգման կարիք: Մարմաշենի մշակույթի տունը 1988 թ. երկրաշարժից հետո չի գործում անբավարար ֆիզիկական վիճակի պատճառով:

Համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը ներկայացված է քարտեզ 2-ում:

**Քարտեզ 2.** Մարմաշեն համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը




**Համայնքի հիմնական կարիքները**

Հետազոտության արդյունքում առանձնացվել են բնակավայրերի հիմնական առաջնահերթությունները, որոնք նշվել են համայնքապետարանի ներկայացուցիչների կողմից: Խնդիրների մեծամասնությունն առաջնային է մի քանի բնակավայրերի համար, իսկ մի քանիսը հատուկ են առանձին բնակավայրերի[3]: Ընդհանուր առաջնահերթություններն են.

- **ավտոճանապարհների վիճակի բարելավումը** (Լեռնուտ, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Հովունի, Մեծ Սարիար, Ջաջուռավան, Քեթի),
- **խմելու ջրի ենթակառուցվածքների նորոգումը** (Լեռնուտ, Կարմրաքար, Կրաշեն, Հացիկ, Մարմաշեն, Շիրակ, Ջաջուռավան),
- **դպրոցի շենքի նորոգումն ու ջեռուցումը** (Մայիսյան, Կապս, Հացիկ, Հովունի, Մեծ Սարիար, Քեթի),
- **մշակույթի տան նորոգումը** (Հովունի, Մարմաշեն, Շիրակ, Ջաջուռ, Քեթի),
- **գազաֆիկացումը** (Մեծ Սարիար, Շիրակ, Ջաջուռ, Քեթի),
- **համայնքի կենտրոնի բացակայությունը** (Լեռնուտ, Ջաջուռ, Քեթի),
- **մանկապարտեզի շենքի նորոգումն ու ջեռուցումը** (Կապս, Մարմաշեն),
- **ոռոգման համակարգի նորոգումը** (Վահրամաբերդ, Քեթի)

Մայիսյանում և Ջաջուռում առաջնային է համարվում անօթևանների բնակեցումը: Կապսում և Վահրամաբերդում կարևոր է կոյուղու հիմնանորոգումը, վերջինում՝ նաև բազմահարկ շենքերի տանիքների նորոգումը: Կարմրաքարում հրատապ է համարվում հեռախոսակապի, իսկ Կրաշենում՝ փողոցային լուսավորության անցկացումը:

[3] Փոքրաշեն բնակավայրի վերաբերյալ տվյալները բացակայում են:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:


**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից

Ընկերության գլխամասային գրասենյակներ՝

Բոնն և Էշբորն, Գերմանիա



**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**
Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de